

1.	06.05.08	327	ԼՂՀ կառավարության 2003թ հուլիսի 8-ի «Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքից օգտվելու կարգի մասին» թիվ 192 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
----	----------	-----	---



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հուլիսի 2003թ.

N192

ք.Ստեփանակերտ

### Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքից օգտվելու կարգի մասին

Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հաստատել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքից օգտվելու կարգը (կցվում է):

ԼՂՀ վարչապետ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

## Կ Ա Ր Գ

### Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքից օգտվելու

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքին համապատասխան սույն կարգը կարգավորում է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի օգտագործումը:

2. Հավասար իրավունքներով ընդերքն օգտագործողներ կարող են հանդիսանալ այն կազմակերպությունները, որոնց կանոնադրություններում նշված է համապատասխան գործունեության ոլորտը:

Ընդերքի շահագործումը վճարովի է և իրականացվում է ընդերքից օգտվելու արտոնագրի և պայմանագրի համաձայն:

#### II. Ընդերքից օգտվելու արտոնագիր

3. Օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման արտոնագրերը սահմանված կարգով տրվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների զարգացման և քաղաքաշինության նախարարության կողմից:

Արտոնագրերում նշվում են օգտակար հանածոների հանքավայրերի ամբողջ պաշարների կամ դրանց որոշակի մասի օգտագործման նպատակներն ու ուղղությունները:

4. Օգտակար հանածոների յուրաքանչյուր հանքավայրի շահագործման արտոնագիրը, որպես կանոն, տրվում է ընդերքի մեկ օգտագործողի: Առանձին դեպքերում տարբեր կազմակերպությունների կողմից օգտակար հանածոների որևէ հանքավայրի շահագործում կարող է կատարվել տեխնոլոգիապես համաձայնեցված սխեմայով՝ ապահովելով նախագծային բոլոր լուծումների իրականացումը:

5. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տարբեր հանքավայրերի շահագործման համար ընդերքն օգտագործողին տրվում է համապատասխան թվով արտոնագիր:

6. Պետական բյուջեի միջոցների հաշվին հետախուզված նոր շահագործվող հանքավայրերի օգտագործման արտոնագրերը պետք է հատկացվեն մրցութային եղանակով, որի անցկացման կարգը, պայմանները և ժամկետները սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների զարգացման և քաղաքաշինության նախարարությունը:

7. Օգտակար հանածոների հանքավայրի շահագործման արտոնագիր ստանալու նախապատվությունը տրվում է այն կազմակերպություններին, որոնց սեփական միջոցների հաշվին հայտնաբերվել և հետախուզվել է տվյալ հանքավայրը:

Նշված կազմակերպություններն արտոնագիր ստանալու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների զարգացման և քաղաքաշինության նախարարություն են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- ա) արտոնագիր ստանալու հայտ.
- բ) կազմակերպության հիմնադիր փաստաթղթերը.
- գ) ընդերքից օգտվելու համար տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնությունը.
- դ) տեղեկանք օգտակար հանածոների պաշարների մասին՝ տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկրաբանական լաբորատորիայի կողմից.
- ե) արտադրության ծրագրված տարեկան ծավալները և արտադրատեսակների անվանացանկը:

8. Սույն կարգի 7-րդ կետի համաձայն արտոնագիր ստացող կազմակերպությունն իրավունք ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկրաբանական լաբորատորիայից ստանալու իր միջոցներով հետախուզված հանքավայրի վերաբերյալ համակողմանի տեղեկատվություն, որը հնարավորություն կընձեռի մշակելու հանքավայրի տեխնիկատնտեսական հիմնավորումը և շահագործման նախագիծը: Դիտարկվող բնագավառի, հատկապես լիազորված պետական կառավարման մարմինների հետ մշակված փաստաթղթերի սահմանված կարգով համաձայնեցումն իրականացվում է վեցամսյա ժամկետում:

9. Գործող հանքարդյունահանող կազմակերպություններն արտոնագիր ստանալու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների զարգացման և քաղաքաշինության նախարարություն են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա) արտոնագիր ստանալու հայտ.

բ) տեղեկանք օգտակար հանածոների պաշարների մասին՝ տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկրաբանական լաբորատորիայի կողմից.

գ) կազմակերպության վերջին երեք տարվա գործունեության փաստացի և նախագծային հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկանք.

դ) ընդերքից և հողատարածքներից օգտվելու համար նախկինում տրված փաստաթղթերի պատճենները, այդ թվում՝ հանքավայրի շահագործման նախագծի հաստատման մասին որոշումը և լեռնահատկացման ու հողահատկացման ակտերը:

10. Գործող հանքարդյունահանող կազմակերպության անբավարար գործունեության դեպքում (հանքավայրի շահագործման, երկրաբանական, լեռնատեխնիկական, որակական-տեխնոլոգիական, բնապահպանական և արտադրատնտեսական պահանջների լրիվ կամ մասնակի անտեսում) արտոնագրում կարող են սահմանվել ժամկետներ, որոնց ընթացքում կազմակերպությունը պարտավոր է իր գործունեությունը համապատասխանեցնել արտոնագրի նպատակային խնդիրներին: Եթե կազմակերպությունը սահմանված ժամկետում ի վիճակի չէ լուծելու արտոնագրի նպատակային խնդիրները, ապա նա գրկվում է ընդերքից օգտվելու իրավունքից, իսկ շահագործվող հանքավայրը դառնում է ընդհանուր հիմունքներով արտոնագրման օբյեկտ:

### **III. Ընդերքից օգտվելու պայմանագիրը**

11. Օգտակար հանածոների հանքավայրի շահագործման նպատակով տրված արտոնագրի հիման վրա սահմանված կարգով հանքարդյունահանող կազմակերպության (ընդերքն օգտագործողի) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության (ընդերքն տրամադրողի) միջև կնքվում է պայմանագիր:

Պայմանագիրը կողմերի հարաբերությունները որոշող հիմնական իրավական փաստաթուղթն է, որով սահմանվում են պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ընդերքի օգտագործման պայմաններն ու ժամկետները, վարձաչափերը և դրանց վճարման կարգը, ընդերքից օգտվելու իրավունքի դադարեցումը, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունները կարգավորող այլ պայմաններ:

12. Նոր շահագործվող հանքավայրերի օգտագործման պայմանագրերի կնքման համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) սահմանված կարգով տրված արտոնագրի պատճենը.

բ) հանքավայրի շահագործման նախագիծը և տեխնիկատնտեսական հիմնավորումը՝ սահմանված կարգով համաձայնեցված դիտարկվող բնագավառի, հատկապես լիազորված պետական կառավարման մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Պայմանագիրը կնքվում է անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

13. Գործող հանքարդյունահանող կազմակերպությունները պայմանագիր կնքելու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) սահմանված կարգով տրված արտոնագրի պատճենը.

բ) կազմակերպության վերջին երեք տարվա գործունեության փաստացի և նախագծային հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկանք.

գ) ընդերքից և հատկացված հողատարածքներից օգտվելու համար նախկինում տրված փաստաթղթերի պատճենները, այդ թվում՝ հանքավայրի շահագործման նախագծի հաստատման մասին որոշման և լեռնահատկացման ու հողահատկացման ակտերի պատճենները:

Պայմանագիրը կնքվում է անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

14. Կնքված պայմանագրերը սահմանված կարգով գրանցվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկրաբանական լաբորատորիայում:

15. Պայմանագրում ընդերքից օգտվելու ժամկետները սահմանվում են մինչև 25 տարի:

Պայմանագրում սահմանվում են նաև օգտակար հանածոների տարեկան արդյունահանման և պաշարների մարման քանակները, հանքարտադրատեսակների անվանացանկը և տարեկան թողարկման քանակները:

16. Օգտակար հանածոների բոլոր խմբերի հանքավայրերի համար պայմանագրերին կից ներկայացվում են պաշարների հաշվարկի գծապատկերային (սխեմայական) հատակագիծը (կտրվածքներով) և տվյալ պայմանագրով օգտագործման տրվող հանքավայրի համապատասխան տեղամասի սահմանները, դրանցում պարփակված պաշարների քանակը և որակը, պաշարների հաշվարկային բլոկներն ըստ կատեգորիաների:

Հանքավայրի պաշարների հաշվարկի գծապատկերային (սխեմայական) հատակագիծը (կտրվածքներով) դիտվում է որպես պայմանագրի անբաժանելի մաս:

17. Պայմանագրում արտացոլվում են՝

ա) շահագործման համար հատկացված տեղամասի հիմնական և ուղեկից օգտակար հանածոների քանակները, դրանցում հիմնական և ուղեկից բաղադրիչների պարունակությունը.

բ) կազմակերպության տարեկան արտադրողականությունն ըստ արդյունահանվող օգտակար հանածոյի և թողարկվող հանքարտադրանքի, դրանց որակների համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական պայմաններին և հաստատված լավորակությանը (կոնդիցիային):

18. Լրահետախուզման կամ շահագործական հետախուզման արդյունքներով նույն հանքավայրում օգտակար հանածոների պաշարների փոփոխության դեպքում ընդերքն օգտագործման տալու պայմանագրի ժամկետները, կողմերի համաձայնությամբ, կարող են փոփոխվել:

19. Պայմանագրի «Հատուկ պայմաններ» բաժնում պետք է նախատեսվի պայմանագրային պարտավորությունների փոփոխում՝ կապված հանքավայրի լեռնաերկրաբանական պայմանների զգալի փոփոխման, արտադրության տեխնիկատեխնոլոգիական կառուցվածքի էական տեղաշարժերի և այլ գործոնների հետ:

20. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկրաբանական լաբորատորիան պարտավոր է՝

ա) ընդերքն օգտագործողին վճարովի հիմունքներով տրամադրել հանքավայրի վերաբերյալ անհրաժեշտ երկրաբանական տեղեկատվություն՝ անկախ մասնագիտական փորձաքննություն անցկացնելու համար.

բ) անհրաժեշտության դեպքում անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա կատարել երկրաբանատեսագիտական վերազնահատում:

21. Պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

#### **IV. Ընդերքի օգտագործման վարձը և վճարման կառուց**

22. Ընդերքի շահագործումը վճարովի է: Պայմանագրով նախատեսվում է ընդերքից օգտվելու ընդհանուր վարձաչափ՝ մարվող պաշարների տարեկան քանակին համապատասխան:

23. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով տարբեր տեսակի օգտակար հանածոների օգտագործման և երկրաբանահետախուզական աշխատանքների համար կատարված ծախսերի հատուցումը կատարվում է ըստ տարեկան մարվող պաշարների քանակի:

Վարձաչափերը փոփոխվում են սահմանված կարգով հաշվարկված արդյունաբերական մեծածախ գների տարեկան ամփոփ ինդեքսին համապատասխան:

24. Ընդերքի օգտագործման վարձ վճարողներ են հանրապետության տարածքում գործող բոլոր հանքարդյունահանող կազմակերպությունները (անկախ սեփականության ձևից): Վարձավճարը հաշվառվում է արտադրանքի ինքնարժեքի մեջ:

Ընդերքի օգտագործման վարձը հաշվանցվում է պետական բյուջե:

25. Մարվող պաշարների որակին ու քանակին համարժեք վարձաչափերի հաշվարկը պետք է կատարվի ընդերքն օգտագործողների և ընդերքը տրամադրողի միջև տարեկան կտրվածքով կազմվող համաձայնագրերի հիման վրա, որոնք կցվում են պայմանագրերին և դրանց անբաժանելի մասն են:

## **V. Լեռնահատկացում**

26. Լեռնահատկացումը կատարվում է օգտակար հանածոների հանքավայրի շահագործման նպատակով սահմանված կարգով տրված արտոնագրի և կնքված պայմանագրի հիման վրա:

27. Լեռնահատկացումը ձևակերպվում է ընդերքի օգտագործման աշխատանքներն սկսելու իրավունք վերապահող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերության մեջ աշխատանքների անվտանգ կատարման և լեռնային հսկողության տեսչության (այսուհետ՝ լեռնահսկողության տեսչություն) համապատասխան ակտով:

Լեռնահատկացման ակտը ձևակերպվում է դիմելու օրվանից 15-օրյա ժամկետում:

28. Լեռնահատկացման ակտով որոշվում են ընդերքի օգտագործման տրվող տեղամասերի տարածական չափերը (իրենց կոորդինատային ցանցով), որոնց սահմաններում թույլատրվում է կատարել պայմանագրով նախատեսված արդյունահանման աշխատանքները:

29. Լեռնահատկացման ակտով տրված տեղամասերի սահմանները որոշելիս, բացի այդ տեղամասերի տարածական չափերից, հաշվի են առնվում նաև ընդերքից օգտվելու հետ կապված աշխատանքների տեխնոլոգիական ազդեցության գոտիները: Լեռնահատկացման ակտով տրված տեղամասերի սահմանների փոփոխությունները կատարում է լեռնահսկողության տեսչությունը:

30. Արգելվում է առանց լեռնահատկացման, ինչպես նաև լեռնահատկացման ակտով տրված տեղամասերի սահմաններից դուրս օգտակար հանածոների հանքավայրերի շահագործումը:

31. Լեռնահատկացման և տրված տեղամասերի սահմանների փոփոխության մասին լեռնահսկողության տեսչությունը իրազեկում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը ու ԼՂՀ երկրաբանական լաբորատորիային՝ ներկայացնելով լեռնահատկացման ակտի պատճենը:

## **VI. Հողահատկացում**

32. Ընդերքից օգտվելու համար հողահատկացումը կատարվում է արտոնագրի, պայմանագրի և լեռնահատկացման ակտի հիման վրա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքով և այլ օրենսդրական ակտերով սահմանված կարգով:

33. Ընդերքն օգտագործելիս ծագող հողային հարաբերությունները կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային և ընդերքի մասին օրենսդրություններով:

## **VII. Ընդերքն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները**

34. Ընդերքն օգտագործողներն իրավունք ունեն՝

ա) ընդերքի հատկացված տեղամասում իրականացնելու ընդերքից օգտվելու արտոնագրով և պայմանագրով նախատեսված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը չհակասող ձեռնարկատիրական գործունեություն:

բ) լեռնահատկացման սահմաններում, սեփական միջոցների հաշվին, առանց լրացուցիչ թույլտվության իրականացնել շահագործական-հետախուզական աշխատանքներ, որոնց արդյունքներով օգտակար հանածոների պաշարները սահմանված կարգով հաստատելուց հետո նյութերը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկրաբանական լաբորատորիա:

գ) անկախ փորձաքննության արդյունքներով պաշարների քանակի ու որակի վերաբերյալ նախկին տեղեկատվության փոփոխման դեպքում դիմելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների զարգացման և քաղաքաշինության նախարարություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն՝ արտոնագրում և պայմանագրում համապատասխան փոփոխություններ մտցնելու համար:

35. Ընդերքն օգտագործողները պարտավոր են ապահովել՝

ա) երկրաբանամարկչեյդերական աշխատանքների իրականացումը, օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառումը, հետախուզված, արդյունահանված և ընդերքում թողնված պաշարների ու դրանց պարունակած օգտակար բաղադրիչների վերաբերյալ սահմանված կարգով տարեկան հաշվետվություն ներկայացնելը դիտարկվող բնագավառի, հատկապես լիազորված պետական կառավարման մարմիններին .

բ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի բնագավառի, հատկապես լիազորված պետական կառավարման մարմինների վերահսկողական ծառայության համար համապատասխան պայմանների ստեղծումը՝ տեղերում իրենց պարտականությունների իրականացման նպատակով:

զ) ընդերքից օգտվելու վարձի ժամանակին ու ճիշտ վճարումը.

դ) տարեկան համապատասխան վիճակագրական հաշվետվությունները դիտարկվող բնագավառի, հատկապես լիազորված պետական կառավարման մարմիններին սահմանված կարգով ներկայացնելը.

ե) աշխատանքների անվտանգ կատարումը.

զ) ընդերքից օգտվելու հետևանքով խախտված հողամասերն անվտանգ վիճակի բերելը, ինչպես նաև դրանք տնտեսության մեջ օգտագործման համար պիտանի դարձնելը.

է) մթնոլորտային օդի, հողի, անտառների, ջրի և շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաև շինությունների ու այլ կառույցների, բնության, պատմության և մշակույթի հուշարձանների՝ ընդերքի օգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից զերծ պահումը.

ը) հետախուզական լեռնային փորվածքների և հորատանցքերի պահպանումը, եթե դրանք կարող են օգտագործվել օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ժամանակ ու տնտեսական այլ նպատակներով, և սահմանված կարգով դրանց լուծարումը, եթե հետագա օգտագործման ենթակա չեն:

### **VIII. Ընդերքից օգտվելու իրավունքի դադարեցումը**

36. Ընդերքից օգտվելու իրավունքի դադարեցման հիմքերը սահմանվում են Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքով:

37. Ընդերքից օգտվելու իրավունքը սահմանված կարգով դադարեցվում է արտոնագիրը, պայմանագիրը կամ լեռնահատկացման ակտը չեղյալ հայտարարելու միջոցով:

Ընդերքի ոչ նպատակային օգտագործման և պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքերում ընդերքից օգտվելու իրավունքը դադարեցնելու մասին որոշումը կայացվում է թույլ տրված խախտումների վերաբերյալ ընդերքն օգտագործողին գրավոր ծանուցումից 3 ամիս հետո:

### **IX. Վեճերի լուծման կարգը**

38. Ընդերքից օգտվելու ընթացքում ծագած վեճերը լուծվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: